

891.549-93
Մ-64

3724

ԳՈՅՑՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ

Տ. ՄԵՍԻՆ

ԻՄՊԵՍՈՏՈՒՆ ԵԶԸ

Հ. Ժ Ա Բ

(Պատկերազարդ)

891.995

Մ-64

Թիվ 1/1

Տպագրութեալ հրատական փող. 6

1912

53/24

891.39.5.

18-64

46

1



ԺՈՂՔԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀՀ

Գ. Մեսան

2004

ԹԱՍՏՈՒ ԿԳ



100
2
100
2
100
2

Գինը 2 կուշ.

Թիվ 11

Տպարան «ՀԵՐՄԵՆ» Գրաֆիկական փող. 6
1912

Իմաստուն Եզր

Հետիակ

Մի մարդ է լինում, ասում են, ու
մէկ էլ մի կին: Էս մարդու կինը մեռ-
նում է, թողնում մի տղայ երեխայ:

Մի ժամանակ անցնելուց յետոյ սա
նորից ամուսնանում է, և ունենում մի
տղայ էլ երկրորդ կնոջից: Էս խորթ
մայրը աչքով աչք չունէր թէ առաջւալ
որդուն տեսնի. ողջ օրը բանեցնում էր,
ամեն բանի նըան էր ուղարկում,
հալալ հաց էլ չէր տալիս, որ ուտի,
մինչդեռ ամեն ազիզ պատառ պահում
ու իր որդու բերանն էր կոխում:

Տաւարն էլ էդ խորթ երեխային
էր ուղարկում բաւական չէր, օրական մի
կըտեսնի էր տալիս, թէ՝ տար հանդ, հետդ
ման ածա էս հացը ու երեկոյեան ետ բեր

տուն, որ ուտենք՝ հանդի եղած հացը
համով է լինում, ասում էր:

ԽԵՂԱ երեխան էսպէս մնում էր
երկու կրակի մէջ. ուտէր վայ էր, չու-
տէր վայ էր: Հայրը հօ շատ բան չէր
իմանում, բայց եթէ իմանար էլ, ի՞նչ
պէտք է ասէր՝ հօ կնոջը թողած, տղին
չէր հաւատալու:

Էս երեխան կըլինէր էսպէս տասը,
տասներկու տարեկան: Ի՞նչ խորթ մէրը
ոտքը ներս էր գրել էն շեմքովը՝ նրա
աշքի արտասուքը զեռ չէր ցամաքել.
որ ու գիշեր մի գլուխ լաց էր լինում:
էն էլ չիմանաք թէ ամեն տեղ, ամենի
մօտ: Սեր տարել էր, թէ խորթ մէրն
իմանար, որ նա իր պատճառով համար-
ձակում է ունքը փուտ գցել. մարդին
էնպիսի բաներ կասէր, որ տանից կը
կորցնէր: Նրա լացատեղը գոմի խորքն
էր ու հանդը, որտեղ ուրիշ ոչ ոք չըկար՝
խորթ մօրը խաբար բերելու: Ասած է՝
թէ որբի ճակատը պինդ կըլինի, կեանքը
երկար. բայց էն էլ է ասած, որ եթէ

որբը բախտ ունենար՝ իր մօրիցը կու-
նենար: Էս երեխան էլ, թէԿ ճիշտ է,
քաղցից ու ծարաւից չէր մեռնում,
բայց դէ էն ի՞նչ ապրել էր, որ նա
էր ապրում: Առաջւայ էն վարդի նման
բացւած, կարմիր ու գեղեցիկ երեխան,
որ ամեն տեսնող կանգնում էր, թէ մի
մին էլ նայեմ, հիմա թառամել էր, ճըռ-
րել, աշքերն էին մնացել միայն կեն-
դանի: Տանը հօ խորթ մօր ահից չէր
համարձակի մօտենալ իր խորթ եղքօրը
կամ ըոյը երին. բայց որ հազարից մին
մօտենար նրանց հետ խաղալու՝ պլծաւ:
Օձի ճուտն էլ, ասում են, մօր քնա-
ւորութիւնը կունենայ. էնպէս էին
խանչխանչում, լաց լինում, որ կասես
թէ սև օձը սրտներիցը կծեց:
իբր թէ Գուրգէնն արաւ էզ: Գրանից
յետոյ դէ աչքաւորը ոչ տեսնէր, ական-
ջաւորը ոչ լսէր, թէ ի՞նչ էր դուրս
գալիս խորթ մօր բերանից, ի՞նչ վէր
գալիս Գուրգէնի գլւախն:

Բայց թէ հիմա զուք Աստծու ողորմու-

թիւնը տեսէք: Հանդի նրա ընկերները
իրենց շունն էր ու առաջի մի քանի
գլուխ տաւարը: Սրանց մէջ, մի շէկ,
երկարամազ, բոլորից յաղթանդամ, գե-
ղեցիկ ու կեռապող մի եղը կար՝ անու-
նը Սարու (շէկիկ):

Մի օր, երեխան հանդի արևկուն
արած, թիւնկն էր տւել մի քարի ու
լուս ու տխուր լալիս էր: Արտասուք-
ները իրար ետեցից գործում էին հա-
գործում. կասես վառած ու հալւող
մոմի կաթիւներ լինէին, որ ներքեւ էին
գալիս ու կիսումը սառչում: Խեղճ ե-
րեխան յիշեց իր մօրը, յիշեց թէ ինչ-
պէս ազիզ էր պահում նա իրեն, բե-
րանի պատառը հանում էր տալիս, քիչ
էր մնում թէ սիրտը ձնէր մէջը դնէր,
աչքից բաց չէր թողնում, որ ինչ է
չըկարօտի, իսկ հիմա... Ու յանկարծ
մի էնպիսի ախ արաւ, որ կրակը դա-
ռաւ մարդու սիրտ:

—Ա՛խ Աստւած, ասաց, բո փառքդ
շառ, էս ինչ է իմ օրը. ինչու առաջ

Բնձ չըտարար, յետոյ իմ մօրը: Բա-
անմէր որդի է լինում, որ անմէր
ապրի...

Երեխից մի քիչ հեռու էլ պառ-
կել էր Սարուն ու իրեն լիզ էր տալիս:
Որ էսպէս ախ քաշեց, ու Աստծուց



գանգատւեց Գուրգէնը, եղը յանկարծ
վրայ նստեց, երեսը դարձեց գէպի
երեխան ու մարդու լեզով ասաւ.

—Ինչու ես լաց լինում, այ տղայ,
ինչ է դարդդ, որ օր ու գիշեր արտա-
սուք ես թափում, կրակդ մարդու գըլ-
խի ածում: Ասա, տեսնենք, գուցէ դրան
էլ մի ճար կայ:

Գուրգէնը մի խոր հոգոցով լացը
կտրեց, և զարմացած վրա նստեց:

— Ես էլ որ լաց չըլինեմ, բա ով
լաց լինի, Սարու ջան. քեզ նման մինն
էլ չըկար մինչև օրս, որ սիրտս թա-
փեմ հանգստանամ: Էն օրւանից, ինչ
իմ մէրս մեռել է, սոված, ծարաւ օ-
րերս սպանում եմ, չըգիտեմ թէ
երբ պէտք է լինի վերջը: Պատառ տւած
տեղն էլ, խորթ մէրս վրան թքում է՝
դէմ անում, դէ արի կեր ու ալրի:

— Քրա համար ինչի՞ ես դարդ ա-
նում. այ, իմ պողիս մինը մեղրով է
միքը, մինը՝ եղով. ծծիր ինչքան էլ ու-
զում ես, էլ ինչի՞ է պէտք նրանց հա-
ցը: Մի վախիլ, ինքն էլ անվերջ, ան-
հատնում է, քանի ծծել՝ տեղը նորից
կըլցւի:

— Միայն մի բան պէտք է լաւ
գիտենաս Գուրգէն, — շարունակեց Սա-
րուն, որ քո ծծելդ ոչոք չիմանայ, թէ
չէ քեզ համար լաւ չի լինի:

Գուրգէնը էս որ լսեց, մօտ վա-

ղեց իսկոյն՝ աջ պողի ծայրը դրաւ բե-
րանը, ծծեց՝ տեսաւ եղ. ձախը ծծեց՝
մեղը. էլ ինչ էր հարկաւոր նրան ու-
րիշ: Դեռ մի հէնց էստեղ տեղնուտեղը
լաւ ծծեց մինչև կշտացաւ, իսկ յետոյ
էլ միշտ նոյնն էր անում, երբ կամե-
նում էր:

Ի՞նչ ասել կուղի, որ մի քանի օ-
րից յետոյ նա էլ էն Գուրգէնը չէր: Եղ
ու մեղը ուտողի գոյնը դէ ինչ կըլինէր:

Էն որ ասել են՝ ով որ տարով
կըմեծանայ, նա օրով էր մեծանում,
հէնց դա էր: Անցաւ մի օր, երկու օր,
մի ամիս, աւելի. էլ նա հացի կարիք
չէր քաշում. խորթ մօր տւած պատառ-
ներն էլ իսկի չէր ուզում վերցնի, կամ
վերցրած ժամանակն էլ շանն էր տալիս.
ինքն էլ ուրախ, գւարթ, առաջւայ թա-
ռամած, խորթ մօր ձեռքի նայող երե-
խան չէր: Մի խօսքով, էն օրից, ինչ
Գուրգէնը ճանաչել էր Սարուին՝ փոխ-
ւել էր: Էս բանը նկատել էր մէրը ու
մնացել շւարած:

ի՞նչ է պատճառը, մտածում էր
նա, որ ի՞նչ տանը լինում է, չի լինում,
իմ որդուն եմ տալիս, ոչ մի գործի
չեմ ուղարկում, էլի գունատ, էլի նի-
հար. իսկ Գուրգէնին, որ շան տեղ քաշ
եմ տալիս, չոր հացն էլ եմ խնայում
էլի գոյնը տասն անգամ լաւ:

Շատ մտածեց, շատ կատաղեց,
փրփրեց նախանձից, բայց դէ ի՞նչ ա-
նէր, ատելը նրանից շատ չէր լինի,
զբկելը՝ նոյնպէս:

—Գուցէ սրա գաղտնիքը հանդ
գնալումն է,—մտածեց նա.—Եկ իմ ե-
րեխային էլ նրա հետ հանդ ուղարկեմ,
տեսնեմ:

Ու էդպէս էլ արաւ: Էն օրից, իր
որդուն էլ Գուրգէնի հետ հանդ ուղար-
կեց, առաջուց պատւիրելով, թէ տես,
հանդի Գուրգէնը ի՞նչ որ անի՝, դու էլ
արա: Գուրգէնին թէև դուր չեկաւ եղ-
բօր ընկերութիւնը, բայց դէ ի՞նչ անէր,
կարաք հակառակէր մօրը: Բայց թէ նա
էլ ի՞նչ պէտք է խանդարէր Գուրգէնին

որ, կամ ի՞նչ կըկտրէր նրա խելքը, թէ
եղան պողիցը կարող է եղ կտմ
մեղը դուրս գցել: Էն է Գուրգէնը հան-
գում երբ սովածանում էր, որևէ պատր-
ւակով ետ էր մնում կամ առաջ ընկ-
նում եղօրից, մօտենում Սարուին,



ձեռքերը քսում աչքերը կամ պարանո-
ցը, իբր թէ քոր անում. Նա էլ գլուխը
կռացնում էր ու էդպէս ծծում: Մի օր
էլ եղբայրը ուղեց Գուրգէնի պէս մօ-
տենալ Սարուին, բայց Սարուն էնպէս
փնչացը ու վրա պրծաւ, որ եթէ

Գուրգէնը ուշ հասնէր, ով զիտէ ուռքերի տակը տար կամ պողերի ծայրը հանէր։ Դրանից յետոյ էդ երեխան էլ հանդ չը գնաց։ Մայրն էլ տեսաւ որ չէ, որդին Գուրգէնի նման կարմրելու և գեղեցկանալու փոխարէն, քանի գնում էնքան աւելի է նիհարում ու տգեղանում՝ դադարեց էլ տաւարն ուղարկելը։ Նա օր ու գիշեր քունն ու հանգիստը կտրած, Գուրգէնին էր հետեւում։

Մի օր էլ յանկարծ գոմի դուռը բաց արաւ ներս մտաւ, տեսաւ Գուրգէնը Սարուի պողին ընկած։

— էհէյ, էդ ի՞նչ ես անում, ասաց։

Գուրգէնը թէ՛ «Ոչինչ, կրծքի ու ճակատի միջատներն եմ ջոկում»։

Մայրը թէ՛ չըհասկացաւ բանի էութիւնը, բայց այնուհետև էլ տեսնում էր, որ էս Գուրգէնը Սարուից պոկ չի գալիս, գիշերներն էլ գլուխը վրան է քնում։ — «Էստեղ մի եւ կայ», մատը կծեց խորթ մայրը, «թէ չէ նրա պէս տասը, տասնըհինդ գլուխ տաւար էլ

ուրիշ կայ, հէնց միշտ էլ նրան պէտք է քորի ու ազերը հընտրի»։

Թէ՛ Գուրգէնը հազար ու մի տեսակ պատճառաբանում էր, որ Սարուն բոլորից օգտակար ու խելօք եղն է, որ պառաւ ու շատ երախտիքի տէր է, բայց և այնպէս սրանցով մօր կասկածները էլի չփարատւեցին։ Ի՞նչ պնէր, ի՞նչ չանէր, չար օձը սիրտն էր մտել, պէտք է մէկին կծէր, թոյնը մէկի վրայ թափէր։ Էսպէս էլ եղաւ։ Մտաւ անկողինը, սուտ հիւանդ ձևացաւ։

— Հայ, հարայ, մեռնում եմ, ասաց։ Երկու օր դիտմամբ ոչինչ չըկերաւ։ Երրորդ օրը միայն՝ մարդը որ շատ հարցցեց, թէ ի՞նչ կուտես՝ պատասխանեց։ — Երազումս մէկը եկաւ ասեց՝ քո գեղը ձեր Սարու եղան միսն է, որ նրանից մի շամփուր խորովես, ուտես՝ կառողջանաս։

Խեղճ մարդը մնաց մոլորւած, ի՞նչպէս մորթէր Սարուին. իր տան սիւնն էր։ Երբ կնոջն ասաւ՝ ուրիշ մի հորթ

կամ աչառ մորթեմ Սարուի տեղակ,
քիչ մնաց խեղճի գլուխը պոկէր:

—Իմ չըլինելուց յետոյ, աշխարհը
դայ ու ջուրը տանի, ասաց. միզեզն էլ
ինձանից լաւ ես համարում:

Ճարը կտրած՝ խեղճ մարդը հա-
մաձայնեց միւս օրը մորթել Սարուին:
Երեկոյեան խորթ մօր երեխաները ու-
րախուրախ յայտնեցին Գուրգէնին, թէ
ապին էգուց քո Սարուին պէտք է
մորթի:

Կայծակ դիպչէր Գուրգէնին լաւ
էր, քան թէ էղ լուրը լուէր: Հացն էլ
մոռացաւ, ջուրն էլ: Քաշւեց գոմի մի
անկիւնը և սկսեց լաց լինել յուսահատ:
Նա իր արտասուքները աշխատում էր
Սարուիցն էլ ծածկել, մնց յայտնէր
նրան այդ բոլորը: Բայց դէ Սարուն էլ
հօ մի հասարակ անսառւն չէր, նա ի-
մասառւն էր. ամեն բան նրան արդէն
վաղուց յայտնի էր եղել: Երբ բոլորն
էլ, թէ տանը, թէ գոմումը խորը քնի
մէջ էին, ու միայն Գուրգէնն էր պր-

թուն լալիս, Սարուն մօտեցաւ նրան
ու հարցրեց.

—Էղ ինչ է, Գուրգէն, հիմա ինչու
ես լալիս, ասա մի տեսնեմ:

—Է՛՛Է՛՛... Սարու ջան, ես լսել եմ
շատ եմ ուրամիս, որ քեզ էլ ասե՞մ,—
պատասխանեց Գուրգէնը, ու արտասուք-
ները թափւեցին:

—Ոչինչ, ասա տեսնենք, դարդն
առանց դարման չի լինի: —Գուրգէնը
հազիւ հազ իրեն զսպելով պատմեց թէ՝
բա Սարու ջան, էսպէս, էսպէս բանն...
խորթ մէրս երեք օր է հիւանդ է, բան չի
ուտում, հիմա ասել է, որ քո մսիցն է
ուզում. հայրս էլ էգուց քեզ պէտք է
մորթի...

—Քեզ չասի էսպէս պէտքէ անես,
որ գլխի չընկնեն. բայց դեռ էլի ոչինչ,
ուշ չէ, միայն թէ ինչ որ ասեմ,
պէտք է կատարես:

—Ամեն ինչ կըկատարեմ, միայն
թէ քեզ չըմորթեն, Սարու ջան, ամեն
ինչ:

— Դէ լսիր, Գուրգէն, էգուց դու
տաւարը չըգնաս. որ հայրդ ինձ մոր-
թելիս թոկուզի կապելու, կըգնաս հին
թոկը կըբերես, մի խախալ լիքը մո-
խիր էլ տակս կածես, ու ինքդ պինդ
վրաս նստես ձիավարի:

Միւս օրը ճիշտ որ Սարուխն ջո-
կեցին տաւարից ու թողին տանը,
Գուրգէնը էդ օրը տաւարը չգնաց. հայ-
րըն էլ նրան չստիպեց, քանի որ Գուր-
գէնի արտասուբները գաղտնիք չէին
նրա համար. Այդ օրը միւս որդուն
տաւարն ուղարկեց:


Երբ հայրը պատրաստւեց մորթե-
լու, Գուրգէնին պարանի ուղարկեց:
Գուրգէնը գնաց հինը բերաւ:

— Այ որդի, ինչու նորը չբերիր, ա-
սաց հայրը:

— Էս ել բաւական է, ապի, հօ չի
կտրելու, փախչի:

Դրանից յետոյ էլ գնաց երկու
խախալ մոխիր բերաւ, ածեց էնտեղ,
որտեղ պէտք է Սարուխն վէր գցէին:

— Պառաւ, աշխատաւոր եզն է, ապի
ջան, ասեց, թող տակը փափուկ լինի:
— Եհ, ինչ անում ես արա, անու-
շադրութեան տւաւ հայրը:



Երբ ամեն ինչ պատրաստ էր ու
հայրը էն է ուզում էր դանակը վերցնի,
Գուրգէնը նստեց Սարուխ մէջքին ու
ջուխտ ձեռքով բռնեց երկու կողմի փունջ
մազերիցը. Հայրը դրա համար էլ չու-

զեց որդու սրտին դիպչի. երեխայ է,
ասաց, թող ինչ ուզում է անի՝ էս է
մորթելու եմ: Հէսց դանակը մօտեցրեց
Սարուի բգին, թէ չէ, եզը փնչացրեց,
պարանը կտրեց, մոխրի թողով լցրեց
շրջապատղների աշքերը, ու աշքդ բա-
րին տեսնի, Գուրգէնին էլ առաւ՝ թուաւ:

Մնացին ետեկցը ապշած, կանգնած.
իսկ Սարուն էնպէս էր գնում, էնպէս
էր գնում, ոնց որ մի հրեղէն ձի: Դրա-
նից յետոյ հայրը շատ ախ ու վիշ ա-
րաւ, շատ գլխին տւաւ, բայց էլ ուշ
էր, ինչ կօգնէր:

Եկաւ տուն մտաւ, փայտը քաշեց,
թէ կնոջը թակի, սպանի:

—Եյ ըո տունը քանդկի, ասեց, թէ
կնիկ ես, էս ինչ օյին էր որ իմ զլու-
խըս բերիր դու. եզս կորաւ՝ ջառը-ջիան-
նամը, որդիս էլ հետը գնաց: Ուրիշնե-
րը ամիսներով հիւանդանում են, մի
հաւի կուտ էլ չեն ուզում, հիմա դու
երկու օր էր եզն էիր ուզում, հորթն
էլ բաւական չէր:

Հիւանդ կսիկը ճշաց, ծւաց, վեր
թուաւ անկողնից, էս անկիւնին տւաւ,
էն անկիւնին տւաւ, հազար ու մի ստ-
տանութիւն բանեցրեց՝ մինչև որ պըր-
ծաւ: Հիմա թողնենք սրանց էստեղ,
մենք գնանք իմաստուն եզան ու Գուր-
գէնի ետեկց:

Սարուն ու Գուրգէնը շատ գնա-
ցին թէ քիչ, էդ Աստւած գիտէ, միայն
վերջը հասան մի անմարդաբնակ, ան-
ծանօթ անտառ: Դու մի ասիլ, իմաստուն
Սարուն դեռ շատ շատ հնարքներ ունի,
որ Գուրգէնը դեռ չըգիտէ: Նա շրջեց,
շրջեց, վերջապէս գտաւ մի հատիկ
բսած երկանը եղէգ: Գուրգէնին ասաւ.

—Կարիր էդ եղէգը, տակի կէսն էլ
դէն զցիր, վերի կէսն էլ, ու մէջ տե-
ղիցը մի շւացու վերցրու քեզ համար:

Գուրգէնը էդպէս էլ արաւ: Եւ
երբ որ շւին շինեց ու փչեց, նա սկսեց
ածելով Սարուի անունը տալ:

—Դէ դիր ծոցդ, ասեց նա ու նորից



Գուրգէնին առաւ շրջեց ամբողջ անտառը, վերջը գտաւ մի բարձր ու յարմար ճիւղաւոր ծառ. լիզեց՝ էդ ծառը կտրւեց վէր ընկաւ: Նա Գուրգէնին նստեցրեց էդ ծառի ճիւղերի արանքումը ու ասեց. ես գնում եմ արածելու. երբ որ սովածանաս, հանիր ծոցիցդ շւին, փչիր մի երկու անգամ, ես որաեղ էլ լինեմ, կրգամ.—էս ասեց Սարուն ու նորից լիզեց. ծառն ամբողջացրեց: Գուրգէնը մնաց ծառի վրա, էսաեղ նա իր համար մի լաւ տեղ պատրաստեց, իսկ Սարուն հեռացաւ գնաց արածելու: Երբ որ Գուրգէնը քաղցածանում էր, հանում էր ծոցից շւին, փչում մի երկու անգամ. Սարուն իսկոյն գալիս էր, ծառը լիզում, վեր բերում, կըշտացնում եղով ու մեղրով ու նորից դնում ծառին, նորից գնում: Էսպէս նրանք մարդկանց չար նախանձից հեռու ապրեցին բաւական երկար ժամանակ: Գուրգէնը մեծացել, էսպէս մի գեղեցիկ ըոյ ու բուսաթ էր առել,

որ տեսնողը կասէր թագաւորի որդի է:
 Դու մի ասիլ, էս անտառը մի թագաւորի է, որ օձն իրա փորովը, զուշն իրա թևովը վախենում են, թէ էդ տեղով անցկենան: Էս թագաւորն էլ մի հատիկ աղջիկ ունի, էնքան սիրուն, էնքան շարմաղ, որ արեին ասում է, դու հեռացիր՝ ես քո տեղդ լուս տամ: Աշխարհումն էլ թագաւորի ու իշխանի տղայ չէր մնացել, որ չուզենար նրան փեսայ դառնալ. բայց կուսեղէնը ոչ ոքի չէր հաւանել: Թագաւորը ծերացել էր. որդի էլ չունէր: Միակ ուխտն էն էր, որ քանի աչքը բաց էր, մի արժանաւոր փեսացու գտնի իր աղջկայ համար, բախտաւորեցնի նրանց ու ինքն էլ իր մահւան ժամին օրհնութեան հետ իր թագաւորութիւնն էլ տայ նըրանց: Բայց օրերն անցնում էին ու ծերունի թագաւորը իր ուզածին արժանի չէր լինում:

Մի օր կուսեղէնը իր նաժիշտներով, նազիր վեզիրներով, դուրս է գտ-

լիս անտառն զբօննելու, տեսնելու նրա միջի աննման ծաղիկներն ու թռչունները, եղնիկներն ու եղջերուները, որոնք տանու նախիրների նման ազատ շըրջում էին էնտեղ: Նա զբօննելով դուրս է գալիս մի փոքրիկ թալա (բացատ):
 Էնքան դուրս է գալիս նրան էս ծաղկանկար բացատը, որ նստում է մի քիչ հանգստանալու: Նաժիշտները դեռ ոտքի վրա են լինում, որ կուսեղէնը թինկ տւած տեղից աչքը գցում է տեսնում, ինչ տեսնում. իր կողքի ծառին քնած է մի նորահաս պատանի, մի սիրուն արմաղան տղայ, որ նրա նմանը իսկի չէր տեսած: Արևի շողերի տակ, տերևների ստւերները մեղմ խաղում էին նրա դէմքին, ասես թէ թիթեռնիկներ լինէին: Քիչ մնաց կուսեղէնի ուշքը գնար, բայց էլի իրեն պահեց: Առանց ոչ ովի մի բան ասելուն ա վերկացաւ և յայտնեց, որ գնալու ժամանակն է:


Մէկ թէ երկու օր էր անցել, որ

Լուսեղէնը մի էսպիսի երազ պատ-
մեց իր հօրը:

—Մի ալմոր մարդ երազումս ինձ
ասեց՝ թէ քո և քո հօր ցանկացած
փեսացուն Աստւած ինքն է ուղարկել,
և նա այժմ արքայական անտառում
ձեզ է սպասում մի ծառի վրայ:

Էս բանը թագաւորին մին ծիծա-
դելի թւաց, մին էլ ուրախալի, թէ ով
գիտէ, գուցէ ճիշտ է: Լուսեղէնը ճի
պատրաստել տւաւ, տեղն էլ, իբր թէ
մօտաւորապէս, ցոյց տւաւ, ու հրա-
մայեց գնացող իշխաններին, որ գըտ-
նեն, պատւով պալատ բերեն: Թագա-
ւորի մարդիկը քիչ ժամանակից յետոյ
գտան մեր Գուրգէնին ծառի վրայ. նրան
հրաւիրեցին, որ ցած գայ:

—Յած եկ, այ տղայ.—ասացին,—
ցած եկ, քեզ թագաւորի պալատը պէտք
է տանենք: Բայց Գուրգէնը մերժեց և
երբ վեզիրները փորձեցին իրենք բարձ-
րանալ ծառը, Գուրգէնը հանեց ծոցից
շւին ու փշեց թէ չէ, Սարուն եկաւ.



եկաւ ու էլ ոչինչ չհարցրեց, ընկաւ
անծանօթների վրա, ոտքերի տակը տը-
ւաւ, պողերի ծայրը հանեց՝ ջարդեց:
Մի կերպ ողջ մնացածները լուր բերին
Թագաւորին, թէ՝

—Բա չես ասիլ, էսպէս մի եզը,
մեզ էս օրը գցեց, էլ չըգիտենք երկըն-
քիցը իջաւ, թէ գետնիցը դուրս եկաւ,

Թագաւորն ու Լուսեղէնը մնացին
ապշած. բայց նոր հրաման տւին, որ
աւելի շատ մարդիկ գնան թոկերով,
չւաններով, բռնեն, եզը կապեն ու տը-
ղին առնեն, բերեն:

Գուրգէնը հէնց որ զօրքի ծէրը
տեսաւ, նորից շին ածեց. Սարուն ա-
ւելի կատաղած, աւելի զայրացած ե-
կաւ էս անդամը ու ընկաւ զօրքի մէջ.
ինչքան ոտքով, տամն էնքան պողերով,
ինչքան պողերով, տամն էնքան ոտքով,
ջարդեց, բշեց անտափից. Նրանը էլ,
ինչ թոկ, ինչ մարդ, ինչ ձի. էլ ում
միտն եկաւ, կամ ով կարաց ձեռք մեկ-
նի թոկի. քաջը նա էր, ով կարաց փախ-

չել, իր գլուխն ազատել։ Գուրգէնը
մնաց մենակ. Սարուն նորից գնաց ա-
րածելու՝ պատւիրելով, որ զգուշ կենայ
ու չքնի։

Շատ անդամ թագաւորը մարդիկ ու-
ղարկեց, բայց բոլորին էլ Սարուն ջար-
գեց. Վերջը մի էսպիսի հնարքի դիմեցին.
ծածուկ պահապաններ դրին Գուրգէնի
մօտ, մինչև որ մի քանի օրից յետոյ
նրա քունը տարաւ ու քնեց. Մինը
շատ զգուշութեամբ բարձրացաւ ծառը,
ձեռքը տարաւ յանկարծ դուրս քաշեց
ծոցից շւին ու ցած նետեց. Գուրգէնը
վեր թռաւ թէ չէ, ձեռքը իսկոյն ծոցը
տարաւ, բայց էլ ուշ էր. Էդ ժամա-
նակը Սարուն եօթը սարի էն կողմն էր:
Գուրգէնին ցած բերին, տարան պալատ,
իսկ նրա շւին տւին Լուսեղէնին. Գուր-
գէնը դրանից յետոյ մի քանի օր մնաց
ուշաթափ ընկած. Աչքը մէկ էլ որ
բաց արաւ, տեսաւ իր կողքին. Լուսե-
ղէնին։

— Ինչու ես լաց լինում, սիրուն

տղայ, ասաւ նա, Աստծու կամքն է որ
դու բախտաւոր լինես. ես իմ հօր միակ
աղջիկն եմ, ու ողջ աշխարհումը մի
հատիկ. հարիւր թագաւորի տղայ է ե-
կել ինձ համար ու դատարկ ետ դառել:
Համաձայնիր պսակւել ինձ հետ. դու
կը լինես մեր երկրի թագաւորը, ես էլ
քու թագուհին:

— Լաւ,—ասաւ Գուրգէնը, համա-
ձայն եմ ամեն բանի, միայն թէ խընդ-
րում եմ իմ շփս, իմ շփս ինձ տւեք:
Երբ կուսեղէնը յայտնեց, թէ կոտրտել
է շփն, Գուրգէնը շատ տիրեց, անչափ
լաց եղաւ զրա համար և վերջը ինքրեց,
որ զոնէ նրա կտորտանքն էլ է բերի տայ
իրեն: Կուսեղէնը կտորները բերաւ և
տւաւ Գուրգէնին:

Մի ամբողջ օր Գուրգէնը չար-
չարեց, հազիւ կապեց, կապկապեց կը-
տորները և զրաւ բերանին փչեց: Բայց
նրա ձայնը էլ առաջւայ նման զիլ չէր:

Թէ ինչ էր Սարուի զըութիւնը
երբ եկաւ ծառի մօտ ու Գուրգէնին

չգտաւ, Աստւած ոչ նշանց տայ: Որ-
դեկորոյս մօր նման լաց էր լինում
նա. Եօթը սարի, Եօթը ծովի այն կողմն
էր, որ լսեց մի շատ նւազ ծանօթ ձայն.
սա պլըշէց, ականջ կալաւ և երբ հա-
մոզւեց, որ Գուրգէնն է՝ ձայնի կողմը
թուաւ:

Գալիս էր, ո՞նց էր գալիս, որ էլ
ասելու չի: Ճամփին ինչ պատահեց,
ոտնատակ տւաւ, սպանեց կամ կիսա-
կենդան արաւ. Եօթն օրւայ ճամբան
մի աչքը ճպելում անցաւ, եկաւ հասաւ
պալատին: Պահապաններից մի մասը
հազիւ հազ կարողացան փախչել, գլուխ-
ներն ազատել, թէ չէ շատերը էնքան
շփոթեցին, որ մի երկու ոտ չփոխած՝
էստեղ, էստեղ զլիսկոնձի եկան, կիտւեցին
իրար վրայ: Սարուն փշրեց վեց երկա-
թէ դոները և հասաւ Եօթներորդին,
որի ետևն էր Գուրգէնը կուսեղէնի
հետ: Ահից սարսափած՝ ամենը մի տե-
ղով փախաւ թագնւեց, մնաց մենակ
Գուրգէնը: Մի հարւածով վերջինն էլ

Փշեց, հասաւ Գուրգէնին։ Տեսնելու
էր, թէ ինչպէս արտասուքները հեղեղի
նման թափում էին երկուսի էլ աչքե-
րից. Էն անլեզու անասունը հէնց լաց
էր լինում Գուրգէնի համար, որ կա-



սէիր թէ՝ մարդ է, էն էլ իրան որդին։
Գուրգէնը Սարուխն էր համբուրում,
իսկ Սարուն նրան լիզում։ Սա մէկ
ուզեց բոլորին էլ կոտորի, մէկ էլ,
երբ որ Գուրգէնից լաց կուսեղէնի
միտքը՝ աւելի շատ ուրախացաւ։

Լաւ պատրաստութիւն տեսան։

Եօթն օր, եօթը գիշեր հարսանիք
արին, Գուրգէնին ու կուսեղէնին պը-
ռակեցին իրար հետ. Գուրգէնը դառաւ
թագաւոր, և իր հօրն էլ, որ իրանից
յետոյ էնքան վշտացել էր ու տանջ-
ւել խորթ մօր ձեռքին, բերել տւաւ իր
մօտ։

Դրանից յետոյ նրանք ուրախ ու
երջանիկ ապրեցին երկար ժամանակ
ու հասան իրանց մուրազին։

Երկնքից երեք ինձոր վէր ընկնի,
մինն ասողին, մինը լսողին, մինն էլ
Գուրգէնին ու կուսեղէնին։



3824

2013

00007885



ՀՅ Ազգային գրադարան



NL0007885

~~Դիմել~~

Թիֆլիս, «Գիր» գրավաճանոցին:

Тифлисъ, Книжный магазинъ „ГИРЪ“